

Արձանագրություն թիվ 4

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2019թ դեկտեմբերի 25-ին

Օրակարգը՝

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի գիտական սեմինարների կազմակերպման մասին:
2. Հաղորդում բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:
3. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
4. Մանկավարժական և ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը: Գիտխորհրդի 15 անդամներից ներկա են 15-ը և կարող ենք սկսել խորհուրդը:

Նիստի նախագահ, պրոֆ. Ս.Վ.Ղոչիկյան- Ըստ օրակարգի պետք է լսենք ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի գիտական սեմինարների կազմակերպման մասին: Ամբիոնի վարիչները ներկայացնեն իրավիճակն ամբիոններում:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Ա.Մարգարյան- Գիտական սեմինարների ընթացքում քննարկում ենք այնպիսի հարցեր, որոնք խիստ արդիական են ֆիզիկական քիմիայի ոլորտում և չեն քննարկվում դասախոսությունների ժամանակ: Միաժամանակ քննարկում ենք թեզերի ընթացքը, մեթոդների կիրառությունները: Այդ սեմինարներին որոշ դեպքերում մասնակցում են մագիստրոսական թեզերի ղեկավարները:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյան – Այստեղ խնդիր ունենք ուսանողների հաճախումների հետ: Միասնական մագիստրոսական ծրագիրը բերում է ամբիոններում սեմինարների ժամերի կրճատման, հետևաբար ավելի քիչ են ժամաքանակները, և ուսանողների ոչ կանոնավոր հաճախումները չեն տալիս այն արդյունքը՝ ինչին մենք ձգտում ենք:

Նախագահ Տ.Վ.Ղոչիկյան – Ես համաձայն եմ: Ակնհայտ է, որ մագիստրոսական ծրագիրը 1,5 տարվա համար է՝ հետևաբար դասաժամերը կրճատվել են: Մենք այդ քայլին գնացել ենք ընդհանուր ծրագրերի հետ համահունչ լինելու համար, սակայն մագիստրոսական թեզի կատարման ժամկետ մնացել է անփոփոխ, այդ բացը կլրացվի լաբորատորիաներում, որտեղ իրականացվելու են մագիստրոսական թեզերը:

Նոր նախագծում առաջարկվում է նոր տարբերակ՝ համակցված ուսուցում: Այսինքն ուսանողը հնգամյա կրթական ծրագրով կարող է ստանալ մագիստրոսի որակավորում:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյան - Սեմինարների ընթացքում քննարկվում են նոր ձեռքբերումներն այս ոլորտում և զուգահեռ քննարկվում են մագիստրոսական թեզերի ընթացքը:

2. Տ.Վ.Ղոչիկյան – Օրակարգի երկրորդ հարցը. Հաղորդում բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:

Ֆակուլտետում գործում են 3 ԳՀԼ-ներ և “Էկոլոգիական անվտանգության կենտրոնը”: “Օրգանական միացությունների հիմնական դասերի սինթեզի նոր մեթոդների մշակում” ԳՀԼ. “Անօրգանական քիմիա” ԳՀԼ., Ֆիզիկական քիմիա ԳՀԼ. և “Էկոլոգիական անվտանգության կենտրոնը”ում գործող թեմատիկ ֆինանսավորմամբ լաբորատորիան: Թեմաների տարեկան հաշվետվությունները տրված են: Հաշվետու ժամանակահատվածում 4 ստորաբաժանումներում կատարված հետազոտությունների արդյունքում հրատարակվել են 45 աշխատանք:

Ֆակուլտետի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հաստատել ներկայացված Գ/Հ լաբորատորիաների հաշվետվությունը և միաժամանակ երաշխավորեց Քիմիայի ֆակուլտետում գործող Գ/Հ բազային լաբորատորիաների հետագա ֆինանսավորումը:

3.Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր – Տ.Վ.Ղոչիկյան

- Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում: Սա մեր օրակարգի մյուս հարցն է: Հարկ եմ համարում ևս մեկ անգամ ամբիոնի վարիչների ուշադրությունը սևեռել այն հանգամանքի վրա, որ բացառեն թեմաների կրկնությունը տարբեր առարկաների ծրագրերում: Քննական տոմսերը կազմվեն ըստ ծրագրերի: Հետևաբար ամբիոնի վարիչները ներկայացնեն ընթացքը

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան-Ամբիոնում կարդացվող բոլոր առարկաների համար կազմված քննական տոմսերը համապատասխանում են ինչպես առարկայի բովանդակությանն, այնպես էլ առարկայական ծրագրին: Տեղի չի ունենում հարցերի կրկնություն կամ նույնություն տարբերի առարկաների մոտ: Քննական տոմսերը ստորագրվում և կնքվում են քննությունից մեկ օր առաջ: Բակալավրիատի տոմսերը կազմվում են 5 հարցերից, որոնցից մեկը կամ երկուսը վարժությունների տեսքով են: Այս մեթոդը մեր ամբիոնում օգտագործվում է երկար տարիներ: Այս տարբերակը ավելի արդյունավետ է՝ քանզի հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել ուսանողի պատրաստավածությունը:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան Նման մոտեցում կա նաև մեր ամբիոնում: Հարցաշարերը կազմված են ըստ ԵՊՀ-ի ուղեցույցի պահանջների և բացառում են թեմաների կրկնությունը տարբեր առարկաների ծրագրերում: Քննական գործընթացը կազմակերպված է նորմալ խնդիրներ չկան:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ի.Մարտիրյան: Քննական տոմսերը կազմվում են ժամանակին:

- Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան -այժմ անցնենք հաջորդ հարցի, որը պակաս կարևոր չէ: Մանկավարժական և ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում

- Մանկավարժական պրակտիկայի ընթացքը ներկայացրեց դեկանի տեղակալ Ա.Ս.Գալստյանը

Մանկավարժական պրակտիկան մեր 3 ուսանողները իրականացրել են “Ջոն Կիրակոսյան”-ի անվան թիվ 20 հիմնական 1 ամիս տևողությամբ, շաբաթական երկու անգամ և 1-4 դասաժամերը: Պրակտիկան մեր կողմից ղեկավարելու է Գ.Պետրոսյանը: Նման փոփոխությունը պայմանավորված է “Մանկավարժական” կենտրոնի ստեղծմամբ և ուսանողները պետք է ունենան կրեդիտների որոշակի քանակ՝ մանկավարժի կոչում ստանալու համար:

Երկրորդ հարցը պայմանավորված է արտադրական պրակտիկայի հետ այն ներկայացրեց պրակտիկայի ղեկավար ք.գ.թ,դոցենտ Ռ.Պ.Մխիթարյանը (հաշվետվությունը կցվում է): Այն անցկացվում է “Էկոֆորմ” ՍՊԸ-ում, որը կազմված է երկու բաժիններից՝ ա) տարրաների պատրաստման, բ) կենցաղային՝ մաքրող, ախտահանող միջոցներ, և “Նարեկ” գիտահետազոտական ՓԲԸ-ում, պրակտիկան ղեկավարել են Լ.Թադևոսյանը և Ծ.Բիլյանը: Երկու կազմակերպություններից էլ ստացել ենք դրական արձագանք մեր ուսանողների մասնագիտական գիտելիքների և պատրաստվածության վերաբերյալ:

Ուս.խորհրդի անդամ Գ.Առաքելյան- “Նարեկ”-ում իրականացված աշխատանքը շատ արդյունավետ էր՝ հազեցած փորձնական և տեսական մասերով: Բոլորը շատ բարիացական էին և ուշադիր:

Ուս.խորհրդի անդամ Ա.Բրուստյան- “Նարեկ”-ում քիմիա բաժնի ուսանողներս խնդիր ունեինք, որը պայմանավորված էր “մանրէաբանություն” առարկայի հետ:Այս առարկային ծանոթացել ենք հենց տեղում և փորձնական բաժինը ավելի քիչ էր:

Ուս.խորհրդի նախագահ Շ.Վարդանյան- Պրակտիկան մեզ բավականին շատ հմտություններ տվեց: Սակայն նախընտրելի կլիներ ոչթե ամեն օր գնայինք 2 ժամով այլ ամբողջ աշխատանքնային օրով: Այս դեպքում ամբողջ պրոցեսին կմասնակցեինք:

Դեկան Տ.Վ.Ղուչիկյան – Հարգելի ուսանողներ հաշվի առեք այն հանգամանքը, որ Դուք արտադրական պրակտիկան անցկացրել եք մասնավոր կազմակերպություններում: Կազմակերպությունը չի կարող ամբողջ օրը տրամադրել Ձեզ և չիրականացնել իր գործընթացը ամբողջ թափով:

Քիմիայի ֆակուլտետի փոխդեկան – Ա.Գալստյան Մանակավարժական պրակտիկայի համար կենտրոն պետք է ներկայացնել 30 հարց պրակտիկայի վերաբերյալ, որպեսզի ուսանողը ստանա մանկավարժի որակավորում: Այդ խնդրով զբաղվելու է պրակտիկայի ղեկավար Գ.Պետրոսյանը:

Օրակարգի վերջին կետում՝ ընթացիկ հարցերում ունենք 2 կետ

Ա) Արտաքին գրախոսման տրված Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտներ Լ.Ս.Գաբրիելյանի, Ա.Գ.Խաչատրյանի և պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյանի „Ֆիզիկական քիմիայի խնդիրների ժողովածու” վերնագրով ուսումնական ձեռնարկը վերադարձվել է և տրված է դրական կարծիք այժմ դրված է հրատարակման հարցը:

Հաշվի առնելով ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի միջնորդությունը և գրախոսների դրական կարծիքը խորհուրդը միաձայն որոշեց դոցենտներ Լ.Ս.Գաբրիելյանի, Ա.Գ.Խաչատրյանի և պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյանի „Ֆիզիկական քիմիայի խնդիրների ժողովածու” վերնագրով ուսումնական ձեռնարկը թույլատրել տպագրության

Բ) Գիտխորհուրդ է ներկայացվել օրգանական քիմիայի ամբիոնի ասիստենտ քիմ.գիտ.թեկնածու Ա.Ս.Գալստյանի “ Հավելանյութերը սննդի արտադրություններում” վերնագրով ուսումնական ձեռնարկը՝ <<Սննդի անվտանգություն>> բաժնի ուսանողների համար: Ձեռնարկը ենթարկվել է ներամբիոնային գրախոսման և քննարկվել է օրգանական քիմիայի ամբիոնի նիստում(արձանագրություն թիվ 4):

Ամբիոնի նիստից եկել է դրական որոշում: Պետք է վերոհիշյալ ձեռնարկը տալ նեղ մասնագիտական գրախոսման՝ թերությունները բացառելու համար:

Գիտական խորհուրդը միաձայն որոշեց տալ վերոհիշյալ աշխատանքը արտաքին գրախոսման՝ Նարեկ՝ գիտահետազոտական ձեռնակություն ՓԲԸ:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Տ.Վ.Ղռչիկյան

Մ.Ա.Սամվելյան